Պետրոս Դուրյան

Իղձք առ Հայաստան

Երբոր ցողին փաղփուն շիթերն գիշերվան
Խոտի, թերթի, ծաղկի վըրա կը շողան,
Երկինքն երբոր աստղեր փալփլին գիշերը՝
Ցայտեն արցունք, կայծ իմ ցաված աչերը.

Ի՜նչ, Հայաստա՛ն, քեզ մոռնա՛լ…
Երբե՛ք, այլ սև նոճի մ՚ըլլալ, քեզ շո՛ւք տալ:

Ջ՚իս աստղազարդ երկին սփոփել չ՚է կարող,
Մասյաց սարին արտասվալից է նա քող,
Ձեր հիշատակն ինծի համար հեշտագին՝
Ներման կուսին սիրո առջի արցունքին.

Դամբա՛նք, ավե՛րք, Ձեզ մոռնա՛լ…
Երբե՛ք, այլ ուղխ մ՚արցունք ըլլալ, Ձեզ թա՛ց տալ:

Երկաթ, շղթա, զնդան, անդունդք ու վըհեր,
Ամպրոպ ու շանթ, մահվան զանգակ ու ջահեր,
Չ՚է, չ՚են կարող պահ մը Ձեր վառ հիշատակ
Ծածկել սևի ու սոսկումի՝ վեմի տակ.

Ազա՛տ օրե՛ր, Ձեզ մոռնա՛լ…
Երբե՛ք, այլ հուր մ՚ըլլալ և Ձեզ Հայո՛ւն տալ:

Զվարթ բնության այն կամարներն ծաղկահյուս,
Բույր, կայծ ու գեղ, նայվածք, ժըպիտ սիրուհվույս,
Անուշ հովեր, արծաթ ալիք վըտակին
Ձեր հուրն սրտես պահ մը առնել չը կրցին.

Փառա՛ց օրեր, Ձեզ մոռնա՞լ…
Երբե՛ք, պատրույգ մ՚ըլլալ այլ Ձեզ, ու լո՛ւյս տալ:

Արշալույսին տժգույն աստղեր երբ փալփլին,
Գողտըր գեղգեղ վարդակարոտ բուլբուլին,
Բնության դաշնակք, ո՞հ չ՚են կրնար նվաճեր
Ձեր հառաչներն որով մոընչեն նոճիներ.

Սև՛ սև՛ օրեր, Ձեզ մոռնա՞լ..
Երբե՛ք, արյուն մ՚ըլլալ և Ձեզ կարմի՛ր տալ:

Թերևս ժպտին Մասյաց մըթին սարերը,
Կամ արտասվին Սիպերիո սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր չ՚են կրնար
Խեղդել իմ ձայնս, փշրել փըշոտ իմ քնար.

Արդարությո՛ւն, քեզ մոռնա՞լ,
Երբե՛ք, այլ սուր մ՚ըլլալ, սրտեր քեզ մուտ տալ:

Մինչ ցե՞րբ գոչեմ, ձայնըս մեկը չը լըսեր,
Հայն յուր ժանգոտ շղթան երբե՛ք չը սարսեր…
Վայրկյան մ՚ինձ հետ դեռ իրավունք չ՚թոթովեց.
Հայն գ՚իս ծաղրեց, և ձայն մը գ՚իս չը թովեց.

…Դեռ կը գոչեմ Ձեզ, Հայե՛ր,
Որ դամբանիս մեջ չը լըսեմ Ձեր վայեր:

Հարուստն ու կղեր թե ազգ ըզգան ու վառին,
Թե «լույս և սեր» Հայ սրտերուն մեջ թառին,
Թե լուսո դարն երկնե «ազատ զավակներ»,
Թ՝եղբայրություն, սիրո վառին կըրակներ,

Թեև ըլլամ ես մեռել,
Դամբանես դուրս կ՝նետվիմ ԱՔԱՏ Հայն տեսնել:

1869